



(Շար. Բ. էջէն)

ՄԻՐԸՐ - Ի՞նչ է ուրեմն յաջորդ քայլը, հիմա որ 100,000 ստորագրութեամբ հանրագրութիւնը Մոսկուա դրկուած է:

ԲԱԼԱՅԵԱՆ - Ղեկավարութեամբ եւ առաջնորդութեամբ Ընդհանուր Քարտուղար Միխայէլ Կորպաչովի, Կեդրոնական Կոմիտէն առանձին յանձնաժողով մը նշանակած է, զբաղելու համար Սովետական Միութեան ազգութիւններու հարցերով: Այս Յանձնաժողովը կազմուեցաւ այս տարուան Յունուար 4ին, եւ անոր ղեկավարին առաջին գործերէն մին եղաւ ընդունիլ Ղարաբաղէն պատուիրակութիւն մը - 13 հոգի Ղարաբաղէն եւ 4 հոգի Մոսկուայէն: Պատուիրակութիւնը ներկայացուց ընդարձակ տեղեկագիր մը, որ կը պարունակէր պատմական տեղեկութիւններ եւ պետական ու (համայնավար) կուսակցութեան վաւերաթուղթեր, որոնք կը փաստէին հայ ժողովուրդի իրաւունքը՝ Ղարաբաղի սեփականութեան: Պատուիրակութեան անդամները բողոքեցին նաեւ այն բանին համար որ անցնող մօտ եօթանասուն տարիներու ընթացքին «ազգայնական» նացիոնալիստ) սխտակուած էին բոլոր անոնք որոնք փափաքած էին Ղարաբաղի վերամիացումը Հայաստանի հետ: Յանձնաժողովի ղեկավարը պատասխանեց թէ ընդհակառակը՝ այդպիսիները հայրենասէրներ էին, որովհետեւ անոնք իրենց հայրենիքի մասին կը խօսէին, եւ հետեւաբար ինք չէր խորհեր թէ իրենք ազգայնական էին: Իսկ ասիկա իրա՛ւ է:

Ղարաբաղի հարցը միմիայն Ատրպէյճանի հայերուն հարցը չէ. իրականութեան մէջ, Ղարաբաղը ռուսաստանեան հարց է: Ան ազգավարական հարց է: Նոյնը՝ Նախիջևանի պարագային: Դարերով, ռուսերը եւ հայերը պայքարած են Ռուսական կայսրութեան հարաւային սահմաններուն ապահովութեան համար: Եւ այդ հարաւային սահմանային գիծին երկայնքին կառուցուեցան ռուսական - հայկական պաշտպանողական բերդեր - Ալեքսանդրապոլը, Լենինականը, Կարսը, Էրզրումը: Այս գործակցութիւնը զսպանակուած էր երկու ժողովուրդ-

ներուն կողմէ զգացուած ազգավարական - ազգազիտական անհրաժեշտութենէ մը: Եւ անոնք երբեք չդաւաճանեցին իրենց միջեւ գոյութիւն ունեցող վստահութեան ողիին:

Սակայն ի՞նչ պատահեցաւ յանկարծ 1920ին: Միակ անհատ մը որ կը կոչուէր Ճուկաշվիլի, այսինքն Ստալինը, իր վրայ վերցուց թուրքերու պահանջներուն տեղի տալու գործը, եւ Նախիջևանն ու Ղարաբաղը դնելու ատրպէյճանական հսկողութեան եւ իշխանութեան ներքեւ: Կրնա՞ք նման բան մը պատկերացնել: Ան պարզապէս գործածուեցաւ թուրքերուն կողմէ: Եւ իրականութիւնը այն է որ թուրքերը կրցան իրականութիւնը այն է որ թուրքերը կրցան ռուսական գօտի եղած էր երկար ժամանակ եւ ազգազիտական ապահով ամբողջ մը: Եւ ինչո՞ւ այսպէս եղաւ: Որովհետեւ թուրքիոյ նպատակըն էր Հայաստանէն բաժնուած պահել Նախիջևանի եւ Ղարաբաղի չրջանները, զանոնք ներառել Ատրպէյճանի մէջ, քանի որ թուրքիա Ատրպէյճանը իր բնական ստացուածքը կը համարէ: Սակայն, ինչպէս ըսի, Ատրպէյճան բազմազգ Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն մըն է - ան մերն է, Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնն է եւ ու Միութեան մասը: Թուրքիա ոչ մէկ պահանջատիրութիւն կրնայ ունենալ անոր նկատմամբ:

ՄԻՐԸՐ - Ո՞վ, ձեր կարծիքով, ամէնէն աւելի պիտի ընդդիմանայ Ղարաբաղի եւ Նախիջևանի հարցին լուծման:

ԲԱԼԱՅԵԱՆ - Շատ որոշ կերպով ըսեմ՝ փան-իսլամները: Փան - իսլամները իսլամութեան Փաշիստներն են: Փան - իսլամութիւնը դաշնակիցն է Փան - թուրանականութեան եւ Փան - թրքութեան: Անքարայէն հասնող փան-իսլամութիւնը արդէն կեդրոններ ունի Սովետական Միութենէն ներս - Պաքու, Թաշքենդ, Մախաչքալա, Ուֆա: Մենք ծանօթ ենք փան-իսլամներու գործունէութեան եւ այս մասին կը գրենք միութենական թերթերուն մէջ: Անոնք դէմ են Ղարաբաղի եւ Նախիջևանի՝ Հայաստանի հետ վերամիացման: Իսկ նման բան մը յստակօրէն դէմ է Ռուսիոյ եւ ռուսաստանեան ազգավարական շահերուն: